

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՀՉՈՐ ՎՐԱՍՏԱՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՏԱՂԱՆԴ ԵՎ ՆԵՐՈՒԺ»



Հունիսի 25-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին խորհրդարանում հանդես եկավ կառավարության գործունեության մեկամյա ծրագրի հաշվետվությամբ: Նշենք, որ դեռևս հունիսի 1-ին վարչապետի 151 էջանոց հաշվետվությունը ներկայացվել էր խորհրդարանին:

Խորհրդարանում վարչապետի մեկամյա հաշվետվությանը ներկա էին երկրի կառավարության անդամները, Վրաստանում գործող կրոնական ուղղությունների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, ոչ կառավարական կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՈՒԿՐԱԻՆԱ

ԸՆԴՊԾՎԵՑ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 22-23-ը Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Ուկրաինայում:

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ իր ուկրաինացի գործընկեր Վլադիմիր Զելենսկու, երկրի վաչապետ Դենիս Շմիգլայի, Ուկրաինայի Ազգային ռադայի նախագահ Դմիտրի Ռազունկովի հետ:

Երկու երկրների նախագահների առանձնազրույցի եւ պատվիրակությունների ընդլայնված կազմով բանակցությունների ավարտից հետո, կայացավ Սալոմե Ջուրաբիշվիլու եւ Վլադիմիր Զելենսկու համատեղ մամուլի ասուլիսը:

Ինչպես նշվեց համատեղ հայտարարության մեջ, կողմերը քննարկել են Վրաստանի եւ Ուկրաինայի



(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

COVID - 19

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ԴԱՐԵՏԱՅԻՆ ԺԱՄԸ ԶԵՂԱՐԿՎՈՒՄ Է ԻՍԿ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՑ ԲԱՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԷ

Հունիսի 22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվեց կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումների մեղմացման հարցը:

Նիստի ավարտին անցկացված ճեպասուլիսում վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ միջգերատեսչական խորհուրդն ընդունել է որոշում հուլիսի 1-ից պարետային ժամի չեղարկման մասին: Վարչապետի հայտարարությանը, հունիսի 22-ից վերացվում է նաեւ բաց տարածքներում դիմակ կրելու պահանջը, այն պարտադիր կլինի միայն փակ տարածքներում եւ հանրային տրանսպորտում:

րությանը, հունիսի 22-ից վերացվում է նաեւ բաց տարածքներում դիմակ կրելու պահանջը, այն պարտադիր կլինի միայն փակ տարածքներում եւ հանրային տրանսպորտում:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

«ՎՐԱՍՏԱՆԸ» «ՄԵԾԱՆՈՒՄ Ե» ՄԵՐ ԱԶՔԻ ԱՌԱՋ



Կարծես երեկ էր, որ նշեցինք թերթի առաջին համարի լույսընծայման 75-ամյակը, 80-ամյակը... Այն ժամանակ ես թերթի հոբելյանի նշանավորման համար Վրաստանի նախագահի հրամանագրով ստեղծված պետական հանձնաժողովի անդամ էի եւ հիշում եմ՝ ինչ մեծ պատասխանատվությամբ ու շահագրգռվածությամբ էինք մշակում հոբելյանական ծրագիրը, հրավիրատուների ձեռակերպումը, ծրագրված միջոցառումների բոլոր մանրամասները...

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈՐԵԼՅԱՆԴ, ՍԻՐԵԼԻ «ՎՐԱՍՏԱՆ»

Լրացավ մեր սիրելի «Վրաստան» թերթի առաջին համարի լույսընծայման 100-ամյակը: Մառնեուլիի մունիցիպալիտետի Խոժոռնիի վարչական միավորի բնակիչների անունից թերթի գլխավոր խմբագրին, ողջ խմբագրակազմին, բնականաբար, նաեւ թերթի հավատարիմ ընթերցողներին ի սրտե շնորհավորում եմ պաբերականի հոբելյանի առիթով:



ԱՐՄԵՆ ՀԱՆՎԵՐԴՅԱՆ

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՏԱԶԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵՅԻՆ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ» ՀԱՄՈՉԻՉ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԸ» ԿՈՒՆԵՆԱ 71 ՄԱՆԴԱՑ, ՔՈՉԱՐՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ՝ 29, ԻՍԿ ՍԱՐԳՅԱՆԻ «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԴԱՇԻՆՔԸ՝ 7 ՄԱՆԴԱՑ

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ավարտեց հունիսի 20-ին անցկացված Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքների հաշվառումը:

Ընտրությունների արդյունքներով Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հավաքել է ձայների 53,92 տոկոսը: Երկրորդ տեղը զբաղեցնում է երկրի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի «Հայաստան» ընտրական դաշինքը, որը հավաքել է 21,04 տոկոս: Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական տվյալների համաձայն, երրորդ տեղը զբաղեցնում է երրորդ



Նախագահ Սերժ Սարգսյանի «Պատիվ ունեմ» ընտրադաշինքը, որն ունի 5,23 տոկոս աջակցություն: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՅՆ ԵՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին շնորհավորեց Նիկոլ Փաշինյանին հունիսի 20-ի արտահերթ ընտրություններում տարած հաղթանակի առիթով:



- Սրտանց շնորհավորում եմ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին հաջող ընտրությունների եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարած հաղթանակի առիթով: Հաջողություն՝ ապագայում նույնպես: Ես անհամբեր սպասում եմ Հայաստանի նոր կառավարության հետ սերտ համագործակցությունը,- «Թվիթերի» իր էջում գրել է Իրակլի Դարիբաշվիլին: *Լուսանկարը՝ «Վրաստանի» արխիվից*

ՎՐԱՑԱՎԱՆ ԶԼՍ-ՆԵՐԻ ԱՐՉԱՎԱՆՔԸ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 20-ին Հայաստանում կայացած խորհրդարանական արտահերթ ընտրությունները եւ Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագրի» համոզիչ հաղթանակը լայն արձագանք է ստացել ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս: Ստորեւ ձեռ ուշադրությանն ենք ներկայացնում այս թեմայով վրացական մամուլում հրապարակված առանձին քաղաքագետների մեկնաբանությունները:

ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «ՓԱՇԻՆՅԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՑ, ՈՐՈՎԻՏԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԻՐԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՀԵՏ ԶԻ ԱՌՆՉՈՒՄ»

Թբիլիսյան «Ինտերպրեսնյուսին» տված հարցազրույցում Գլրբալիզացիայի եւ տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի ղեկավար Ստեփան Գրիգորյանը նշել է, որ Հայաստանում արտահերթ ընտրությունները պայմանավորված էին Ղարաբաղյան պատերազմում պարտության ու համավարակի արդյունքում ստեղծված տնտեսական ծանր իրավիճակի հետեւանքով քաղաքական ճգնաժամի կարգավորման անհրաժեշտությամբ: Արտահերթ ընտրությունները գործնականում պայքար էր ներկայիս իշխանության եւ նախկին Քոչարյան-Սարգսյան իշխանության միջեւ: Իշխանության ընդդիմախոսները Փաշինյանին եւ նրա իշխանությանը մեղադրում էին դավաճանության մեջ: Ընտրություններում Փաշինյանի հաղթանակը հստակ ցույց տվեց, որ հայ ժողովուրդը Ղարաբաղյան պատերազմում պարտությունը չի առնչում նրա անվան հետ: Հասարակությունը քաջատեղ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)


ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՅՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ

Ինչպես խորհրդարանական ընտրությունների, այնպես էլ ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրը սահմանվելու է օրենքով: Ընտրական օրենսգրքը նախատեսվել է, որ սակրեբուլոյի եւ ինքնակառավար-

վող քաղաքի/համայնքի քաղաքապետի հաջորդ ընտրությունները տեղի կունենան հոկտեմբերի առաջին շաբաթ օրը: Այս տարի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակվել են հոկտեմբերի 2-ին:

Հունիսի 25-ի խորհրդարանի լիազույմար նիստին նշվել է, որ ընտրությունների օրը օրենսդրական մակարդակով որոշելու մասին ընդդիմությունը հայտնել է աշխատանքային խմբում, որին համաձայնել է «Վրացական երազանքը»:



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՌՈՒՍՆԵՐԸ ԿՐԱԿԵՒ ԵՆ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԱԿԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

Հունիսի 23-ին Սեւեռյան նավատորմը, Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայությունը Սահմանապահ ծառայության հետ համատեղ, կանգնեցրել է Դրիմի թերակեղզու Ֆիլեյնտի հրվանդանի շրջակայքում Ռուսաստանի պետական սահմանի խախտումը Մեծ Բրիտանիայի ռազմածովային ուժերի էսկորթային ակնանկորի կողմից: Սահմանապահ պահականավն արձակել է նախագուշակական կրակ, իսկ Սու-24 ռմբակծիչը՝ նախագուշակական ռմբակենտում, հունիսի 23-ին լրագրողներին հայտնել են Ռուսաստանի պաշտպանության նախարարությունում:

ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՊԱՍԿՈՐԻ ՀԱՄԱՐ ԿԳՐԾԻ 40 ՏՈՒՆԱՆՈՑ ԸՆՏՐԱՇԵՍ



«Վրացական երազանք» կուսակցության նախագահ, խորհրդարանական մեծամասնության ղեկավար Իրակլի Կոբախիձեի խոսքով, սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորության թեկնածուների համար կգործի 40 տոկոսանոց ընտրաշեմ:

Նրա հավաստմամբ, օրինազորի վերաբերյալ դիրքորոշումները համաձայնեցվել են:

- Այսօր բովանդակային քննարկում էր, մենք քննարկեցինք բոլոր այն հարցերը, որոնց շուրջ տարբեր կարծիքներ ունեինք: Ընդհանուր առմամբ,

նախագծի վերաբերյալ դիրքորոշումները համընկնում են: Կարելի է նորությունը, որի շուրջ մենք համաձայնության եկանք ընդդիմության հետ, Քաղաքային խորհրդում մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների համար 40 տոկոսանոց շեմի սահմանում: Սա լրացուցիչ նորություն է, որն այսօր կարտագույվի օրենքի նախագծում, հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐԻ ԱՌՁԵՎ ԾԱՌԱՋԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՐՅՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հունիսի 23-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու գլխավորությամբ անցկացվեց Ազգային անվտանգության խորհրդի նիստ:



Հանդիպմանը քննարկվեցին երկրի առջև ծառայած մարտահրավերները եւ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները, գրաված տարածքների վերաբերող հարցեր ու կարելի է նախկառույցների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումները:

իրականացվող միջոցառումներին մասին:

Ազգային անվտանգության խորհուրդը քննարկեց Վրաստանի գրաված տարածքներում առկա խնդիրները, ներառյալ՝ տարածքների ապօրինի բռնազավթումն ու Վրաստանի քաղաքացիների անօրինական կալանքը: Խորհրդի անդամները խոսեցին արդեն ձեռնարկված քայլերի եւ ապօրինի կալանավորված քաղաքացիների, այդ թվում՝ Ջազա Գախեյլաձեի ազատ արձակման ուղղությամբ

կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու հարցը: Փաստաթղթի վերջնական տարբերակն արդեն կազմվել է ՆԳՆ-ի կողմից, եւ հուլիսի 1-ին կքննարկվի Ազգային անվտանգության խորհրդին առընթեր հանձնաժողովի կողմից, որից հետո նախագիծը կներկայացվի Վրաստանի կառավարության հաստատմանը:

ԻՐԱՆ ԷԲՐԱԻՄ ՌԱՅԻՍԻՆ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

Հունիսի 18-ին Իրանում անկացվեցին նախագահական ընտրություններ: Ընտրողների ձայների 62 տոկոսով (17,8 միլիոն ձայնով) ընտրություններում հաղթող ճանաչվեց Իրանի դատական իշխանության ղեկավար Էբրահիմ Ռայիսին:

Իրանի նախագահ Հասան Ռոհանին հանդիպեց նախագահի պաշտոնում իր փաստացի հետնորդ Էբրահիմ Ռայիսին եւ շնորհավորեց նրան ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՇԱՌԼ ՄԻՇԵԼԻ ՄԻՋՆՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿՈՉ ՄԵՆԱՏԻՑ



ԱՄՆ Սենատում բանաձեւ է ներկայացվել, որով Վրաստանում բոլոր կուսակցություններին կոչ է արվում արագացնել ապրիլի 19-ին Շառլ Միշելի միջնորդությամբ ձեռք բերված համաձայնության կատարումը: Սենատը վերահաստատում է աջակցությունը Վրաստանի տարածքային անբողջականությանն ու եվրատլանտյան նկրտումներին:

միության խորհրդի նախագահ Շառլ Միշելի առաջարկված փոխադիջումը, բոլոր ընտրված խորհրդարանականներին գբաղեցնել իրենց տեղերը խորհրդարանում եւ առանց հապաղման սկսել աշխատանքը Վրաստանի առջև ծառայած մարտահրավերների շուրջ, ներառյալ՝ «Կոլիդ -19» համավարակի հետետեւանքները, թուլացած տնտեսության զարգացման եւ մարտահրավերներով լի տարածաշրջանային դիմամիկան ապահովելու ուղղությամբ:

Կոնգրեսի կայք-էջում հրապարակված բանաձեւի նախագիծը նախատեսում է սենատոր Ռոն Ջոնսոնը: Նրան աջակցում են սենատորներ Ջան Շահինը, Ջեյմս Ռիշը, Քրիս Կան Հոլլենը եւ Ջոն Բարասոն:

Սենատորները «Վրացական երազանքին», «Միասնական ազգային շարժմանը» եւ խորհրդարանում ընտրված այլ կուսակցություններին կոչ են անում անբողջությամբ իրականացնել եվրա-

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՆԱՅՆՎՈՒՄ ԵՆ ԲԵՒԱՌՈՒՄԻ ԴԵՍ ՊԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Եվրամիությունն ընդլայնել է Բելառուսի դեմ պատժամիջոցները՝ սեւ ցուցակում ավելացնելով 78 ֆիզիկական եւ 8 իրավաբանական անձանց:

ԵՄ խորհրդի հայտարարության մեջ նշված է, որ այս որոշումն ընդունվել է՝ Բելառուսում մարդու իրավունքների լուրջ խախտումների սրման եւ քաղաքացիական հասարակության, ժողովրդավարական ընդդիմության ու լրագրողների նկատմամբ բռնաճնշումների հետ կապված:

ԻՍՐԱՅԷԼ ՆԱՖՅԱԼԻ ԲԵՆԵՏԸ՝ ԵՐԿՐԻ ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏ

Իսրայելի վարչապետ է դարձել «Յամինա» կուսակցության առաջնորդ Նաֆթալի Բենետը:

Իսրայելի նոր կառավարությունը ստացել է Կնեսետի վստահության քվեն: Կողմ քվեարկել է 60 պատգամավոր, դեմ՝ 59-ը: Առաջիկա երկու տարիներին երկրի վարչապետի պաշտոնը կգրադեցնի Նաֆթալի Բենետը, ինչից հետո կուլիցիոն համաձայնագրի համաձայն, վարչապետի պաշտոնը կստանան Յաիր Լապիդը:

Բենիամին Նեթանյահուն, որն ավելի քան 12 տարի զբաղեցնում էր Իսրայելի վարչապետի պաշտոնը, կդադանա խորհրդարանական ընդդիմության առաջնորդը:

Ներկայիս կուլիցիան բաղկացած է առավելապես աքերից, աչ կենտրոնամետներից եւ արաբական կուսակցություններից: Այն ստացել է «Փոփոխությունների դաշինք» անվանումը: Նոր կառավարությունում չեն լինի Նեթանյահուի «Լիկուդ» կուսակցության ներկայացուցիչները, չնայած, որ նա ընտրությունների արդյունքներով ամենամեծաթիվ խմբակցությունն ունի Կնեսետում:

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

ԹԲԻԼԻՍԱՐԱՅԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ

2021 թվականի հունիսի 22-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում, թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Ղալթայանի օրհնությամբ եւ բարեմաղթանքով՝ «Ապագա Հայկական» (The Future Armenian) համրային նախաձեռնության շրջանակներում, կայացավ առցանց հանդիպում նախագծի համաֆինանսավորող IDeA հիմնադրամի եւ «Ավորա» բարեգործական նախագծի համանախագահ Ռուբեն Վարդանյանի հետ, որը կազմակերպել էր «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնը:



Հանդիպման նպատակը «Ապագա հայկական» նախագծի քննարկումն էր թբիլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ: Նախագիծը ներառում է այն 15 կետերը, որոնք ուղղված են մինչեւ 2041 թվականը Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության զարգացման, Հայաստանի եւ հայկականի հզորացմանն ուղղված ծրագրային ուղղությունները:

Առցանց հանդիպումն ընթացավ հարցուպատասխանի ձևով:

Հատկանշական է, որ այն մեկնարկվեց երախտագիտության խոսքերով՝ ուղղված Ռուբեն Վարդանյանին եւ նրա գործընկերներին, ուն ֆինանսավորմամբ

իրականացվեց Թբիլիսիի առաջնորդահիատ Սուրբ Գեորգ եկեղեցու մեծածավալ հիմնանորոգումը:

ՍՈՒՄԱՆԱ ԽԱՉՍՏՅԱՆ

